ՄՆԱ.

Ի մայիսի 21 շաբաթ, փլուցին և զեկեղեցին սրբոյն եղիայի ի յէջիպ. զի այս եկեղեցի չէ՛ չինեալ ֆէրմանով, կամ թէ մասն ինչ նորա առանց ֆէրմանի է չինած։ Իսկ զեկեղեցին զոր փլուցին ի փետր. 7 կամին տալ չինել, զի այն ֆէրմանով չինեալ էր ասեն, բայց սղալմամբ փլուցեալ են, ասեն։ Լուայ թէ սկսեալ են չինել, սակայն վերստին փլուցեալ են։ Բայց այս իրաւ է ասեն, զի տաճիկք կամին զհայսն հանել յէջիպէն։ Եկին ի թէքիրտաղու ի հայոց և ի յունաց ի կոստանդնուպօլիս, քանզի յոյնք խնդրեն ի հայոց զտեղի ինչ, զի այն էր եկեղեցւոյն յունաց, բայց հայք առեալ են ասեն։ Սակայն պատրիարգն յունաց ոչ եթող տալ արզուհալ առ թագաւորս այս, զի մի և յունաց եկեղեցին փլուսցի։ Իսկ յոյնք ասեն. մեր ժամը թող փլչի, թէ քան հայոցը փլչի. սակայն պատրիարգն արգել։... Ի յունիսի 13 ծնաւ դուստր թագաւորին անուն նորա Հաթիչէ սուլթան. և արարին չորս գիշեր՝ տէրիա տօնանմասը։... (Հ. Յակոբոս Զամչ. առ Մելգոնեան, 1768, յունիս 30. [Կ. Պոլիս])։

ՄՆՔ.

Իսկ թէ յինչ պէտս թողեալ էր մեզ զայն Անտոն աղայն, զոր և հաստատեալ էր Հ. Թադէոսն. և այժմ վասն այնր դիտաւորութեան տուաւ մեզ այն ի ժառանգաց նորա. այս է, զի՝ 500 ղրուշովն չինեսցի երգեհոն մի եկեղեցւոյդ մերոյ. որ թէ այժմ ոչ յաջողեսցի չինիլ, նշանակեսցի ի տէֆտէր վանիցն, զի առ ապա չինեսցի, և յայլ պէտս ոչ կարէ ի կիր առեալ լինիլ այն դրամ։ (Հ. Զաքարիա առ Մելգոնեան, 1768 սեպտ. 14. [Կ. Պոլիս])։

ՄՆԶ.

Պէյօղլուն Ֆըռէնկի աստուածածնա ժամուն իզին տըվին. կը շնվի կոր քեավկիր լաւ գեղեցիք պինա ցլքեցին. մեր հայոց էյիպի ժամն բըլուցին մէկ քանի տաճկի արզուհալ տալովն։... Օգոստոսի 25ին վէզիրը բօխէց թագաւորը համզա բաշան վէզիր ըրաւ սիլիհտարութենէ ելավ առաջ իրէք թուղ առավ թաքաւորին առչի ախճըկանը նիշանածն էր. ան ախջիկը մեռավ հիմա այտըն բաշասիյէր անկից էկավ աղէկ ճէօմէրտ է շատ օսկի տաղըթմիշ կընէ կօր պախչիշ տալով անթին աստին։ (Պօղոս Ինճիճի Միքայէլեան առ Ստեփան որդի իւր, 1768 սեպտ. 17. [Կ. Պոլիս])։

ՄՆԺ.

Ի վենետիկու եկն լուր յայսմ շաբաթու էտիթթօն ռէփուպլիքային վասն կրօնաւորաց առ հասարակ, արգելլով զի մի ունիցին կախումն ի ճէնէռալացն։ Ի 24 տարվէն ոչ ոք կրօնաւոր լիցի ևն.։ (Հ. Գէորգ Պաղտ. առ Հ. Մկրտիչ Ան. 1768 սեպտ. 17. Հռոմ)։

ՄՆԵ.

Աստ բազում ինչ անցանեն ի վերայ եկեղեցականաց մանաւանդ կրօնաւորաց. և բազում արքունի կարգադրութիւնք եղեն և լինին զնոքօք. և մեք գոլով ֆօրէսդիէր[1] մինչև ցայժմ մեզ ոչ դիպաւ ինչ երևելի տէրամբ։ (Մելգոնեան առ Հ. Զաքարիա, 1768. [Ս. Ղազար] Հռոմ.)։

---

1. Օտարական։